**Արձանագրություն N 4**
**« ՀՀԿՄՔՀ -ԳՀԱՇՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

գ.Քանաքեռավան 23 սեպտեմբերի 2019թ.

ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Առաքելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հարությունյան
Ն.Սարիբեկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Ա.Առաքելյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին**
**(Ա.Առաքելյան)**

Ընդունել ի գիտություն, որ համաձայն 19.09.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության, առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 260,528 / Երկու հարյուր վաթսուն դրամ 53 լումա / ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը չի գերազանցում հրավերով սահմանված չափին:

«ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| *Ընտրված մասնակից ճանաչել՝* | | |
| 1 | «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ | 1 |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0***

**3.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին**
**(Ա.Առաքելյան)**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
**(Ա.Առաքելյան)**

ProTender©
www.protender.am

«ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հարությունյան

Ն.Սարիբեկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան